18 ՍԵՊՏԵՄԲԵՐ· 1848 ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ· ԹԻՒ 12—117 Ֆ ԶԻԼԳԱՏԷ· ՌԶԷ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱՕԳՈՒՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Տարեկան գին կանխիկ Ղուռուշ 100։ Վեցամսեայ գին Ղուռուշ 52 1/2։ Եռամսեայ գին 26 3/4։
Հինգ ստորագրուոց գտնուցին մէկ օրինակ իրեն ձրի դիտի տրուի։
Այս Լրագիրը ամեն շաբաթ օրերը կը հրատարակուի։

Պօշիսեն դուրս գացած Լրագիրներուն փոստային ծախքը առնուցին ջրայ է։
Իր շահին համար շուր մը հրատարակեշ ուզողը դիտի ջնարէ տուցին 40 փարայ։
Ներատիպ գրոց ծանուցումը ձրի է։ Դուրսեն եկած նամակներուն փոստային ծախքը խրկողը դիտի ջնարէ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՕԼԻՍ 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ընդհանուր շաբթու առաւտագուրթ Ինքնակալը հեռուստեալ արքայական հրովարտակը խրկեց բարձրագոյն վեհարքային։

« Իմ Բարձրաբորդութիւդ Վեզիր։

„Ինչն պարձառներուն պարձառ եղողը Աստուած մարդոյս ձար և հնարք բնակեցուցեալ ուրվեցուցած ըլլալով ինչերէն զգուշանալը հարիւրոր է։ Ինչն այս է որ՝ ամէն տեղ բազմութիւն ջրոյ հոմբարներ (հաւներ) և կարելի եղածին չափ տնէրուն տուր բարի պարեր ընուցուած, և ինչերը՝ գորգաթալ գանուողներ անոնց կողմէն ջանք չըլլալ-ելովը յարգի չի բանուեցաւ. և աղքատներուն համար մեկ տիրուութիւնը չի պատրաստուեցաւ. որով այրած ինչերուն շարը առաջիները գայսպէս ինչուելը վայ են. և Աստուածն ամենակալ ամէն տեղի իսնամքը պահպանէ, այս անգամ իրարու եպէս պարահանց մի հրդեհներուն տեղերն ալ ասանկ ինչուիլը պարզաց չի տեսնուելով ջրոյ հոմբարներ և պարեր և ինչերէ պարուցուած կերպանէս ինչուելուն, և փողոցները լցննալուն, և ջրմուղները բանի գալը և օգտակար ըլլալ կերպով նորոգուելուն և ուրիշ ասոնց նման բաներուն վրայ ամէն պարագայներովը խորհիս և խորհրդարանին մէջ խօսելին եղէը մեկ ծանուցանէս։ Այլ՝ անհոգուութիւնը շատ ընդարձակ ըլլալով ամէն մարդու կողմէն գիրեր և յերեկ հրդեհ պարձառելը բաներուն վրայ զգուշութիւն ըլլայ. և ասոր վրայ առհասարակ ամենուն պարուելը ըլլայ և ի գործ դրուելուն նայուի. և մեկ տեղ մը հրդեհ մը պարահի նէ՝ ի՞նչ կերպով և ինչ՞ն ըլլալը աղէկ սուգուութիւնամբ հասկցուելը հարիւրոր բան մըն է. ասոնց պէս եղածը խորհելով ըսի պարձի ի գործ դնէս։ „

Այս բարձր հրամանիս վրայ մեծաղօր տերութեան նախարարները յատկապէս բարձրագոյն դուռը ժողովք մը ընելով խորհեցան որ՝ թէպէտ անցած տարի արքայական հրամանին համեմատ՝ ծախքը օգտակար շինուածոց դանձէն (խազինէի նաֆիէէն) ըլլալով յարմար տեսնուած տեղեր երեք հատ ջրոյ համբար շինուեցան մայրաքաղաքիս մէջ, և այնպէս ալ որոշուեցաւ որ ամէն տարի երեքական հատ շինուի, բայց Մայրաքաղաքս շատ ընդարձակ ըլլալով ասոնք բաւական չըլլալը յայտնի եղաւ. և տարին երեքական համբարանոց շինուելով Մայրաքաղաքիս պիտոյիցը բաւական ըլլալու չափ ջրոյ համբար պատրաստուիլը շատ տարիներու կարօտ բան է։ Ուստի յիշեալ դանձուն բաւականաչափ ստակ ալ յաւելցընելով այս տարի այս համբարները հինգ հատ շինել տնօրինուեցաւ. և ասոնց մէկը բարձրագոյն դուռը պիտի շինուի, որ Աստուած չընէ, պէտք եղած տեղը դիւրութեամբ գործածուելու գայ. և մէկալներն ալ աղէկ մը հասկընալով պիտի հարկաւոր տեսնուած տեղերը պիտի շինուին։ Նոյնպէս՝ մանաւորաց շինուածքները իրարմէ բաժնող բարձր պատեր շինուիլը և շինուածքներուն քարաշէն ըլլալը և փողոցներուն լայնարձակ ըլլալը պիտի նայուի. և ասոր համար յատկապէս ջանք պիտի ըլլայ որ քարաշէն շինուածքներու պէտք եղած նիւթերը Մայրաքաղաքիս մէջ շատ գտնուին, և աժան գնով առնուին ծախսուին. որպէս զի ամէն մարդ բաւական ըլլայ տունը այն կերպովը շինելու, և տներուն վարձքն ալ տարապայման չի բարձրանայ։ Մինչեւ եռաքը փայտաշէն տուն շինելը բնաւ պատշաճ տեսնուած չէ, և մեկ տունը քովինէն զատող պատը աղէկ և հաստատուն ըլլալուն պիտի նայուի։ Եւ ջրմուղ գործիքները թէպէտ կրակ մարելու համար շատ աղէկ հնարուած բաներ են, բայց հիմակուան սովորական կերպով շինուածները այս բանիս շատ մեծ օգուտ մը չունենալնին տեսնուած ըլլալով՝ ասոնց ալ աղէկ և օգտակար եղածը շինելը տրըուի և Մայրաքաղաքիս մէջ տարածուի։

Եւ որովհետեւ շատ տեսակ մանրամասն քննութիւններէն ետքը աղէկ հասկրցուած է որ՝ խոնարհ ձգելու խօսքը ըստ մեծի մասին պարապ բան է. հասարակաց անհոգութիւնն է եղած կրակներուն խիստ շատին պատճառը. և անանկ իրենց դատապարտելի անհոգութեամբը թէ իրենց և թէ ուրիշներուն ծանր վնասներ պատճառող մարդիկ յանցանքը իրենց վրայէն նետելու համար անծանօթ խոնարհաձիներ հնարեր են. որով ամէն մարդու ձեռքը ոտքը կը թուլնայ. սրտերնուն վախ կը տիրէ. և պէտք եղած բաներէն զգուշութիւնը պակաս ըլլալով ծանր վնասներ կը ծագին. ուստի այս խորհրդական ժողովքը անանկ անօրինեց որ՝ նախ և առաջ ամենուն ծանուցում ըլլայ որ զգուշանան. և անկէց ետքը կրակը որ տընէն ելլէ նէ՝ այն տանը տէրը կամ նոյն ժամանակը հոն գտնուողը բռնուի և ղարիբէին յանձնուի։ Եւ աղէկ և պատշաճաւորքննութիւն ըլլալէն ետքը թէ որ կրակին պատճառը այն մարդուն անհոգութիւնն է նէ՝ անոր արժանի եղած պատիժը տրուի։ Նմանապէս թէ որ չար մարդ մը հասարակութեան վնաս հասցընելու համար խոնարհ ձգած ըլլայ և բռնուի և ստուգուի նէ՝ հասարակաց սիրտը անոր օրինակաւոր փրկարար երկիւղ մը ազդելու կերպով անանկ մարդը պատժուի։ Այս տնօրէնութիւններս հասարակութեան ծանօթ ըլլալու համար Լաչէմի վաչէի տերութեան լրագիրը հրատարակած ըլլալով մեզի ալ հոս գրել պատշաճ տեսնուեցաւ։

— Բարձրապատիւ Վամիք փաշան Դիւզ-էր-Ռիեան աշտիճանով Այտոյի կուսակալ անուանելուն վրայ՝ զինուորական խորհրդարանի խորհրդական անդամներէն մեկը պակաս ըլլալով՝ անոր տեղը դրուեցաւ Իսրէնէյի համարակալ (փէֆիէրպար) Ռասիս էֆէնտին. և ասոր տեղը Իսրէնէյի համարակալ անուանեցաւ Էրիք Օէբի էֆէնտին, որ երբեմն Դրապուզանի համարակալ էր։

— Արտաքին գործոց տեսչութեան դիւանագրագիր (խրիճէ քեաթիպի) Իսիպ էֆէնտին երկրագործութեան ժողովոյն (զիրաէի Դճլէսիին) անդամ անուանեցաւ. և յիշեալ դիւանագրութեան պաշտօնը տրուեցաւ Թէվֆիք էֆէնտիին, որ առաջ ալ ժամանակ մը այս պաշտօնը վարած էր։

— Մերէզլի մո-հասըլ խաթ-ճէ պէյ Սալէհ աղային իր օրհասովը մեռնելով՝ անոր տեղը Մահմուտ փաշայ զատէ Էլսէտտին պէկը Մերէզլի մո-հասըլ անուանեցաւ։

— Տրամա և Սամագով վիճակներուն խայտառնիքը փոխել պէտք ըլլալով, Բարասու Էֆենտիէի մո-պէր Հիւսէին Հիւսնիւ պէկը Տրամայի. և Ուսուսի մո-հաֆըզ Հասան փաշայն Սամագովի խայտառամ անուանեցան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂԴԻԱ։ Մայիս 15 ին և յունիս 23 ին և հետեւեալ օրերուն եղած խուսովութիւններուն գրեւ խաւար պատճառները քննելու կարգը՝ Պ. Լուի Պլանին և Պ. Ռօսիտիէրին համար ալ ծանր ամբաստանութիւններ եղան. որպէս թէ գլխաւոր խորհուրդը Պ. Լուի Պլանին ներկայութեամբը կ'ըլլայ եղեր. և Պ. Ռօսիտիէր այն տեղը Բօլէյիայի գլուխ ըլլալով՝ շատ զէնք է տուեր ապստամբներուն։

Ասոնք երկուքն ալ ազգային ժողովոյ խորհրդարանին անդամ ըլլալով՝ Օգոստոս 25 ին ժողովքին մէջ զիրենք արդարացընելու խօսք բացին. և ժողովքը մինչեւ առաւօտ քշեց։ Կէս գիշերը կէս ժամ անցնելով՝ ժողովոյն նախագահը Պ. Մառա մեկ գրութիւն մը կարդայ, որով հասարակապետութեան դատաստանական հոգաբարձուն Պ. Ռօան, հրաման կ'ուզէր ժողովքէն որ այս երկուանձինքը վերցընէ բանտը դնէ։ Այս բանիս վրայ մեծ աղմուկ ելաւ ժողովքին մէջ. ոմանք կ'ըսէին որ քննութեան տուած տեղեկութիւնները դատաստանական չեն. լոկ հետաքրքրական բաներ են. անոնցմով մարդ վերցընելու չի հետեւիր. Պ. Ռավէնեաք և Պ. Ռօան ասոր հակառակը կը պնդէին, ըսելով թէ՝ գործակալներուն քննութենէն զատ դատաստանական քննութիւններ ալ եղած կան։ Պ. Պաք ելաւ Պ. Լուի Պլանը արդարացընելու և պաշտպանելու. մարդ բան չի խօսեցաւ։ Խօսքը լըմընցընելէն ետքը վիճակ ժողվեցին. և գտան որ՝ 756 հոգիէն 504 ը պատշաճ կը տեսնեն Պ. Լուի Պլանին դատաստանի քաշուելը մայիսի 15 ին եղած խռովութեանը համար։ Ռանի մի հոգի ալ Պ. Ռօսիտիէրը պաշտպանելէն ետքը անոր համար ալ վիճակ ժողվուեցաւ. 477 հոգի ասոր ալ նոյն մայիսի 15 ին խռովութեանը համար դատաստանի քաշուիլը յարմար տեսան. չուզողները 268 հոգի ելան. յունիսի խռովութիւններուն համար ալ Պ. Ռօսիտիէրին դատուիլը ուզող 281 հոգի կար. բայց չուզողները 458 հոգի ըլլալով՝ այս դատաստանը ետ մնաց։ Աստուանէն դուրս եղած ատենին այս երկու երեւելի անձինքը բռնուելու և պահեստի բանտը խրկուելու համար թուղթերը գրուեցան, որ վերանին դատաստան ըլլայ. բայց բռնելու գացողները ասոնք երկուքն ալ իրենց տունը չի գտան, և անկէց ետքը քանի մի օր փընտռուեցին, գտնելը անհնար եղաւ. երեսնին պահած էին։ Պ. Ռօսիտիէրին տունը գտնուած թուղթերը ժողվեցին տարին քննելու համար. և Պ. Լուի Պլանին գրոց սենեակը կնքեցին։

Պ. Լուի Պլան, պահուած տեղէն գիր մը գրեց օգոստոս 26 ին, նախօնալ և պէպա օրագիրներուն, որուն մէջ կ'ըսէ որ՝ զիս յանցաւոր ցցընողը չէ թէ արդարութիւնը, այլ նախանձու և ատելութեան կիրքերն են. ես ալ առ այժմ դուրս չեմ ելլեր. որպէս զի անձնական ազատութեան եղած բռնութեանը դէմ աղէկ բողոք ընեմ, երբ որ դատաստանական քննութեան օրը գալու ըլլայ նէ՝ այն օրը կ'ելլեմ։

— Պ. Ռավէնեաք քանի մի օրագիրներ յունիսի 25 ին, և քանի մըն ալ օգոստոս 21 ին հանած վճռովը խափանել տալուն վրայ՝ 32 օրագրի հրատարակիչներ և գործակալներ ժողվուեցան խորհուրդներին կամ օրագիրները բոլորովին վերջացընելու, կամ բնաւ խորհրդածութիւն և տրամաբանութիւն չի բանեցընելով լոկ եղածները պատմելու, կամ եղած վճռոյն դէմ Պ. Ռավէնեաքին բողոք ընելու, կամ ազգային ժողովոյն աղերսագիր մը գրելու, որ տպագրութեան ազատութեանը պաշտպան կենայ։ Հասարակաց հաւանութեամբ՝ Պ. Ռավէնեաքին բողոք ընելը յարմար տեսնուեցաւ. ուստի մեկ բողոքոյ գիր մը գրեցին, ստորագրեցին, և Պ. Ռավէնեաքին տուին։ Պ. Ռավէնեաք գիրը առած ատենը ըսաւ. քանի մը օրագիրներու դրութիւնը՝ հասարակապետութեան հաստատուելուն վնասակար երեւելով՝ անոնք խափանելը ինձի պարտք սեպեցի։ Ձեր ալ պարտքն էր տպագրութեան և հեղինակի ազատութիւններուն իրաւունքը պաշտպանել, ըրածիս դէմ բողոքելով։ Այս բողոքը ընելնիդ ձեր պատիւը կ'ելլեցընէ. և կ'ըսպասէի որ առանկ բողոք մը ընէք. քանզի ձեր պաշտօնին պատուոյն համար չէի յուսար որ այս բանս առանց բողոքոյ կ'անցընէք։ Ասով Պ. Ռավէնեաք բողոքը ընդունեց. ելքը ետքը կը սորվինք։

— Նախնեալ օրագիրը մեկ ուրիշ Ֆրանսայի օրագիրէ մը առնելով սա յօդուածը կը դնէ։

« Այսօր կրնամք իբրեւ 'ի պաշտօնէ լուր մը հրատարակել, որ Օռլէանի տանը իշխանները (Լուի Ֆիլիբին տղաքը) ճանչցած են, որ Պոռտոյի դուքսը է Ֆրանսայի թագին օրինաւոր ժառանգը. և իրենք կը հրաժարուին ամէն գործէ և ամէն դէպ-

քէ որ օրինաւոր միապետութեան նորէն հաստատուելուն հակառակ դայ, երբ տեսնուի որ հասարակապետութիւը Ֆռանսայի մէջ անհնար է եղեր »։

Այս ըսելէն ետքը Բրոֆէ-րսէօր Գը Լ'-Էսդ օրագիրը, որկէց կ'առնէ նասիհնալը, այս հատուածս ալ կը գնէ. « Փեւրվարի մէջ եղած փոփոխութիւնն ալ իր ժամանակը լսմընցուց։ Այս ալ ասկէց ետքը զարմանալ պէտք չէ պահպանիչ և օրինաւորական կողմերուն՝ առանկ սրտառուչ կերպով իրարու հետ միաբանելնուն վրայ, որ փոփոխութեանը դէմ կը յարձակին. և այս փոփոխութեանս յարգի մարդոցը վրայ զրպարտութիւններ կ'ընեն, ազնիւ և աւրական սրշմունքները կ'աւրշոտկեն ուրիշ կերպարանք կը փոխեն։ Օռլէանի իշխանները Պոռոսոյի դուքսին իրաւունքը ճանչցեր են, և իրենք իրենց բոլոր իրաւունքներէն հրաժարեր են, Թագաւորութեան օրինաւոր ժառանգին ձգելով ամէն բան։ Անանկ է նէ հիմայ՝ 1815 ին եղածին պէս, պահպանիչ կողմը օրինաւորական կողմին ետեւէն պիտի երթան. և օրինաւորականները արհամարհելու կերպով մը իրենց թեւերը պիտի բանան, և 1830 ին երեւցած կորիճ հայրենասէրներնիս զզջումէ և ուրախութենէ աչքերնուն արցունք թափելով առնց գիրկը պիտի խնան »։

Լուի Ֆիլիբ իր ընտանեօքը հիմա Ինկիլթէռա է Պոռոսոյի դուքսն ալ Ինկիլթէռա է։ Լուի Ֆիլիբին թոռը Բոմդ ոը Բառի ըսուած, որ անոր ժառանգը պիտի ըլար, իր մօրը հետ Նէմցէսան է. Պոռոսոյի դուքսն ալ Աէսդրիա շատ կեցաւ, և կնոջը կողմէն ալ շատ ազգակիցներ ունի հոն։ Տասնն և ութը տարի որ Լուի Ֆիլիբ Ֆռանսայոցներուն թագաւորութի ըրաւ, շատ մարդիկ և ամբողջ դաւառներ կային որ թագաւորութեան իրաւունքը Պոռոսոյի դքսին վրայ կը ճանչնային. բայց խռովութեան և արիւնհեղութեանպատճառ ըլլալէն կ'ըզդուշանային։

— Պ. Լուի Պլան օգոստոս 26 ին՝ շաբաթ օրը, Փարիզէն ելեր է վերջին շոգեկառքով Իրիկուան դէմ. և միւս օրը Պելճիքայի Կանտ քաղաքը գացեր է։ Հոն Ֆռանսըզ մը Բոհաֆճէի մը խանութի առաջ կեցած ատենը ասիկայ կը ճանչնայ, Պ. Լուի Պլանն է կ'ըսէ, մարդուն անունը շատ ըսուած ըլլալով շուտ մը քաղաքին մէջ կը տարածի, Բելճիքայի ականջն ալ կը հասնի. մարդ կուգայ, Պ. Լուի Պլանը կը գտնէն, և սուգելու համար անունը կը հարցնեն. որ շտակը կը զրուցէ, ուստի կը բռնեն բանտը կը տանին. և այն գիշերը բանտը կը մնայ. որովհետեւ ճամբու հրամանագիր չունէր։ Կ'ըսեր որ միտքը Պելճիքա մնալ չէ. մինչեւ Օսդենտա երթալ, և անկէց Ինկիլթէռա անցնիլ է. ուստի կառավարութիւնը երբ որ այս իմացաւ՝ նոյն հետայն հրաման ըրաւ որ բանտէն հանուի և ազատ թող տրուի։

— Օրագիրներուն խափանելուն համար օրագիր հրատարակողներուն ըրած բողոքին վրայ ազգային ժողովն մէջ օգոստոս 30 ին խօսք ըլլալով՝ քանի մի երեւելի իրաւագէտներ, որոնց մէկն էր Պ. Ռէսբէլ տը Լադուշ, ըսին որ, քաղաքը պաշարման վիճակի մէջ եղած ատենը անգամ օրագիր խափանելը գործադիր կարողութեան գլուխ եղողին պաշտօնէն դուրս բան է. յատկապէս ազգային ժողովն կը վերաբերի։ Այս առաջարկութիւնս քննելու համար քանի մի մարդիկ որոշուեցան. որ սեպտեմբեր 1 ին ժողովուելով ըսին, ասոր վրայ մեր խորհելիքը խորհելէն առաջ հարկ է գործադիր կարողութեան գլուխը ժողովքը հրաւիրել, և անոր ըսելիքները մտիկ ընել։ Ուստի ժողովն կողմանէ ժողովն նախագահը Պ. Տիւբէն՝ Պ. Բալէնեաքը ժողովքը հրաւիրելու գնաց։

Պ. Բալէնեաքը եկաւ. և ըսած խօսքը այս մտքիս վրայ կը համառօտի։ Չէ թէ միայն անանկ կարծեցինք որ քաղաքին պաշարման վիճակը մեղի իշխանութիւն կուտայ օրագիրներուն հետ անանկ վարուիլ՝ ինչպէս որ վարուեցանք, այլ և ասիկայ ինձի մէկ մասնաւոր պարտականութիւն մը սեպելու ամենեւին չի տարակուսեցայ, որովհետեւ հասարակապետական կառավարութեան նոյն իսկ ընկերանը դէմ կը խօսէին։ Հարկ է մեղի որ հասարակապետութեան թշնամիներուն դէմ անխոնջ պատերազմինք, և ես այս պատերազմէն չի պիտի դադարիմ։ Բռնի եղանակ մըն է ասիկայ կ'ըսեն. բայց մենք Փարիզու փողոցներուն մէջ հրացան և թնդանօթ նետելով եղաւ որ հասարակապետութիւը աղատեցինք. և այս ալ բռնի եղանակ էր։ Օրագիրներուն խափանուիլն ալ ասոր պէս է. և եղած բարոյական անկարգութիւնը նիւթական անկարգութենէն պակաս վախնալու բան չէ։ Ամէն ոք՝ մէկ մարդ մը չի կրնար հանգիստ և խաղաղ նստած տեղը նոր կառավարութիւն հիմնել։ Տղաբերք մը ցաւագին և դժուար ըլլայ նէ՝ ծնուցիչ կը բերեն. տղան գործիքով կ'առնեն, որ մայրն ալ կ'աղատի, շատ անգամ տղան ալ։ Հասարակապետութիւնը ծնած ատենը ծնուցիչը ես եղայ։ Թէ որ ազգային ժողովը կը կարծէ որ աղէկ չեմ ըներ կոր, կրնայ վճիռը տալ. այդ բանին տեր է կատարելապէս. բայց մենք մեր գիտաւորութեանը աղէկութիւնը անանկ լաւ գիտեմք որ, ատանկ վճիռ մը մեզ այս բանէս ետ քաշելու նշան չի կրնար ըլլալ։ Ամէն մարդու իր պաշտօնին վրայ հաստատ մնալուն հարկաւորութիւնը անանկ աղէկ գիտեմ որ, Հանրի Ե. ը ինձի ներքին գործոց տեսուչ, և Լուի Նաբօլէոն ուրիշ ինչ բանի պաշտօնով որ ըլլայ նախարար տրուի ալ նէ, ես իմ պաշտօնիս վրայ հաստատ կը կենամ։

Պ. Բալէնեաքի խօսքը լսմընցուց այս ըսելով։ ցաւ է ինձի որ այս խօսքերս կը պարտաւորիմ օրէնսդրական ժողովին ըսելու, որ ըստ իմիք օրինաց պահպաններ են. որովհետեւ գիտեմ որ ըսածներս օրէնքի մէջ չի կան։ Պէտք էր որ այս խնդիրս ամենէն ետքը առաջարկէին օրէնսդրական ժողովին. պատերազմական խորհրդոյ ատեանը ասիկայ դատելու աւելի յարմար էր։ Ասկէց ալ զատ, ես ինձի տրուած բողոքոյ գրոյն սորագրութիւնն ալ աղէկ մը չի նայեցայ. միայն այսքանս գիտեմ որ՝ խոհեմութեան ճամբայ բռնող օրագիրները ինչպէս են Ռէֆորմ և Պէպա, չէին սորագրած. ասոնք աղէկ հասկըցած էին որ օրագիրներուն էական ընկերութիւններուն դպչուած չէր։

Ժողովականները ամէն մէկը մէկ մէկ բան ըսին. վերջը մէկելնին Պ. Բաժէս ըսաւ. ես ալ տպագրութեան ազատութիւն ուզողներէն եմ. բայց աղէկ կ'ըլլայ որ դատաստանական որոշմամբ սահման մը դրուի օրագիրներուն ունեցած խորհրդածելու աղատութեանը։

Սեպտեմբեր 2 ին եղած ազգային ժողովոյն մէջ այս բանիս վրայ խօսուելով, տպագրութեան կամ օրագիր հրատարակելու աղատութեանը սահման տուող և պաշտպանող օրէնքները խափանուած հրատարակեցան մինչեւ ժամանակ մը, բայց այս ժամանակիս որքան տեւելիքը չորոշուեցաւ։

— Ռուսաց կայսրը, (ինչպէս որ Ֆռանսըզի կառավարութեան մոնիթէօր օրագիրը կը պատմէ), անմիջապէս Բալէնեաք ճէնէռալին նամակ մը խրկեր է. որուն մէջ կը յայտնէ թէ որքան սիրտը տաքցեր է Ֆռանսըզի կառավարութեանը վրայ, որ ամէն տեսակ դժուարութիւններու դիմանալով և յաղթելով բարեկարգութիւնը ամուր կը բռնէ Ֆռանսայի մէջ։ Այս ալ կ'ըսէ որ, սուտ է ամենեւին ինչ բան որ ինձի համար Ֆռանսայի դէմ կը զրուցուի։

— Փարիզու ֆոռա ըսուած փողոցը սեպտեմբեր 3 ին բազմաթիւ թուղթեր փակած էին այդիս այն դին։ Թուղթերուն վրայի գրուած խօսքը այս էր, « Աբծաթայ դերի խրոֆած ծերեր, գլուխներնուդ ղդուշացէք. վերջին ժամերնիդ զարկաւ։ Ժողովուրդը ձեր գէշութենէն ձանձրանալով իր վրէժը պիտի առնէ. Պառպէս և Պլանքի իրենց կուսակիցներ և իրենց պաշտպաններ ունին. որքան որ դուք ժողովուրդին դէմ դաւաճանութեան խորհուրդ ընէք նէ՝ այնքան սաստիկ պատիժ պիտի կրէք. ձեղ ջարդելու սակը (սաթըը) սրած է. ձեղ խորտակելու լախտը (թօփուզը) գլուխներնուդ վրայ վերցած կեցած է. քաղաքացիներ, վաշխառուներ, թագաւորութիւն ուզող ամէն տեսակ մարդիկ, ձեր թագաւորութիւնը ըսմընալու վրայ է. ժողովուրդը չէ թէ տիրել կ'ուզէ, այլ և մինակ և ինքն իր գլխուն կառավարել կ'ուզէ. ինչ ընէք և ինչ ըսէք նէ պարապ է, կարմիր հասարակապետութիւնը ձեզ պիտի կըլլէ։ Արիւն. արիւն. հասարակապետութիւնը ապահովցընելուն ճամբան մինակ այս է։ Այս դու ժողովուրդ, որ քու երկրիդ մէջ խաբուած ես, և ուրիշ տերութեանց մէջ պատիւդ կորսընցուցած ես, բանի սկսէ, և ապագայ ժամանակներուն բարեացապարտ ըլլաս »։

Այս բանս պատմող օրագիրը չըսեր թէ այս թուղթերը ժողվեցին մի, այնպէս փակած տեղերնին թողուցին մի. և թէ կարգացողներուն վրայ ինչ ազդեցութիւն տուաւ։ Բայց ուրիշ տեղեր ալ Փարիզէն դուրս՝ այլ և այլ պատճառներով ազգային պահպան զօրքն ու հասարակութիւնը իրարու հետ կռուիլ և երբեմն արիւնհեղութիւն ալ կ'ըլլայ, ինչպէս է Մօնբէլիէի արկածը։ Նոր պէս բան մըն ալ Ռուլ (Ռուլէս) քաղաքը պատահեր է. խռովարարները կիսոյ Բոգոռոը, կիսոյ հանրի Ե. կը պօռան եղեր. բայց ազգային պահպան զօրքը վրայ գալով ցրուեր են։

— Օգոստոս 30 ին Լոնտրա քաղաքէն Ֆռանսըզի Բարրի օրագրին հրատարակիչին գրուած գիր մը կայ. որուն մէջ գրած է եղեր. « Սենեակէս վար ինջնալու ատենս Պ. Լուի Պլանը գէմս ելաւ. և ասկէց կ'երեւի որ առանձին կենալ չուզեր. քանզի օրէլ-ը պրո-նոբիէ-ը որ երկուքս ալ հոն կը բընակիմք, Լոնտրայի խիստ անուանի և փառաւոր պանդոկներուն մէկն է։ Լուի Նաբօլէոն իշխանը ասոր գալը իմանալուն պէս հետը տեսնուելու գընաց. բայց այն օրը իրար տեսնել չի յաջողեցաւ. յաջորդ օրը տեսնուեցան։

— Ֆռանսայի Տիներ քաղաքին եպիսկոպոսը Տ. Սիպուռ, Փարիզու արքեպիսկոպոս ընտրուելովը, նոյն Տիներ քաղաքին եպիսկոպոսութեան ընդհանուր փոխանորդը Տ. Մէյրիէօ աբբայն Տ. Սիպուռին յաջորդ ընտրեցաւ նոյն քաղաքին եպիսկոպոսական ամբոնը ժառանգելու։

ԱՆԳԼԻԱ։ Լոնտրա կառավարութեան խորհրդարաններուն մէջ փետրվարէն 'ի վեր խորհուրդ կ'ըլլայ որ Հռոմայու հետ անմիջական հաղորդակցութիւնը նորէն հաստատուի, ինչպէս որ էր Հանրի ութերորդ թագաւորէն և Եղիսաբեթ թագուհիէն առաջ։ Այս առաջարկութեանս դէմ քանի մը խօսողներ եղան. մէկ մասը ըսաւ որ՝ Պապին իմաց տալու է որ իր կողմէն Ինկիլթէռա խրկելու դեսպանը եկեղեցական չըլլայ, աշխարհական ըլլայ. չէ նէ վտանգ կայ, չըլլայ որ թագուհին հռոմէական ըլլալու համոզէ։ Ուրիշները կ'ըսէին. Պապին դեսպանը աշխարհական ըլլայ ալ նէ նոյն վտանգը կայ։ Լորտ Բալմէրսդոն պատասխան տուաւ. այդ առարկութիւնը ծիծաղական խօսք մըն է. թէ որ դեսպանին այլակրօն ըլլալովը թագուհիին հաւատքը փոխելէն կը վախցուի նէ՝ պէտք կ'ըլլայ օսմանեան և պարսկայ տերութիւններուն կողմէն ալ դեսպան չընդունիլ. չըլլայ որ ասոնք ալ իրենց հաւատքը թագուհիին քարոզելով անիկայ մահմետական ընեն։ Հակառակորդները ըսին. ինչպէս որ ռուսաց և բրուսիայի տերութիւնները Հռոմ դեսպան ունին, բայց Հռոմ ոչ Պետերբուրգ և ոչ Պերլին դեսպան կը խրկէ, նմանապէս Ինկիլիզի տերութիւնն ալ Հռոմ դեսպան խրկէ, բայց Հռոմէն իրեն խրկուած դեսպան չընդունի։ Հիմա որոշուեցաւ այս երկուքիս մէկուն վրայ պիտի ըլլայ. բայց կենցաղագէտ մարդիկ կ'ըսեն որ Պապը այս երկուքին ալ պիտի չընդունի, ինչպէս որ ամէն տեղ, Ինկիլթէռա ալ եկեղեցական դեսպան պիտի խրկէ. և մինչեւ որ իր խրկած դեսպանը Ինկիլիզի կառավարութեան կողմէն ընդունելութիւն չգտնէ նէ՝ ինքն ալ Ինկիլիզի կողմէն դեսպան պիտի չընդունի. և այս ճամբով Հռոմայու և Ինկիլիզի մէջը ըլլալու անմիջական հաղորդակցութիւնը ետ պիտի մնայ։

— Լուր մը տարածեցաւ Ինկիլթէռա, որ խելամը խռլանտացիք որ Ամերիկայի Միացեալ Նահանգները կը կենային, և Մէքսիքոյի պատերազմին առնը Միացեալ Նահանգաց դրօշակին տակը Մէքսիքոյի դէմ կը պատերազմէին, խաղաղութիւն ըլլալէն ետքը Դէքսաս գաւառը անցեր են. և հոն իմանալով որ խռլանտացիք Ինկիլիզի տերութեան դէմ ապստամբեցան և պատերազմ բացին, յուլիսի 19 ին խօսք ըրեր են միաբան իրենց հայրենեացը օգնութեան հասնելու և Ինկիլիզի տերութեան ձեռքէն աղատելու. և այս դիտաւորութիւնս ճամբայ ելեր են. պատերազմական գործերը իրենք առաջ տանելու միտքերնին դրեր են. և հետերնին ալ 12 կտոր թնդանօթ ունին եղեր։ Հիմայ թէպէտ Խռլանդ

ԳՈՒՆԱՎՈՐ ՄԱՐԴԻԿ։ Վերադարձաւ Գ. Գ. Գ.

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳԱՎԱՌԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ
Գ. Գ. Գ.